Հայկական գիտահետազոտական համցույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

352(47.925)
Հ-99
ԱԿ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵ՛Ք

# ՀՐԱՀԱՆԳ-ՆԱԿԱԶ

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ, ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ 8-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՅԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՐՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԲԱԺՆԻ

ՅԵՐԵՎԱՆ 1931

15523-57

40.169

17 JUN 2013

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 1265
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 6005 (Բ)
ՏԻՐԱԺ 5000

MAR 2010

# ՀՐԱՀԱՆԳ-ՆԱԿԱԶ

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ, ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ 8-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՅԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ

*Խորհուրդների ընթացիկ վերընտրություններն անցնում են այնպիսի պայմաններում, յերբ բանվոր դասակարգն իր ավանգարդ Կոմկուսի ղեկավարությամբ, լենինյան պատգամների անշեղ կենսագործման հիման վրա ծավալում է սոցիալիստական կառուցման հաղթական թափը: Յերկրի ինդուստրացման բազայի վրա գյուղի մանր անհատական տնտեսությունները վերափոխվում են համայնացրած սոցիալիստական տնտեսության՝ տեխնիկայի նորանոր նվաճումների գործադրությամբ: Անընդհատ բարելավվում է աշխատավորության կուլտ-կենցաղային պայմանները: Սոցիալիստական հայրենիքի վերակառուցման 5-ամյակը 4 տարում հոյակապ պլանի իրագործման խնդիրը անհրաժեշտորեն առեղծել է աշխատանքի կազմակերպման նոր, ավելի բարձր ձևեր. սոցիալիստական մրցում, հարվածայնություն և այլն, վորոնք լավագույն գրավական են սոցիալիզմի կառուցման աննախընթաց վերելքի: Այս բոլորը հաջողությամբ կիրագործվի աշխատավորության ուժգնորեն յերկրի պաշտպանության գործն ամրապնդելու պայմաններում, վոր հարկավոր վարկյանին արժանի հարված և հասցնելու համաշխարհային իմպերիալիզմին ու նրա բոլոր տե-*

սակի վարձակալներին, վորոնք ամեն միջոց գործ են դնում տապալելու համաշխարհային պրոլետարիատի սոցիալիստական հայրենիքը:

Քաղխորհուրդ ուղարկվող յուրաքանչյուր պատգամավոր պետք է լինի ամենից առաջ այն համոզումով ու գիտակցությամբ, վոր նրա ակտիվ մասնակցությամբ Քաղխորհրդի աշխատանքներում, վճռական անողոք պայքարով դասակարգային թշնամու՝ մեր յերկրում տակավին մնացած կապիտալիստական էլեմենտների, կուլակի դեմ, ավելի կհեշտացնի, նրան վերջնականապես, վորպես դասակարգի վերացումը և կամրացնի գյուղի և քաղաքի աշխատավորության զոդման գործը՝ ծավալելով խորհրդային ու կոլեկտիվ տնտեսությունները:

Քաղխորհրդի պատգամավորներն իրենց ակտիվ մասնակցությամբ ու հարվածային աշխատանքով է՛լ ավելի բարձրացնելու յեն Քաղխորհրդի հեղինակությունը աշխատավոր մասսաների աչքում: Լայն կիրառելով ինքնաքննադատության լոզունգը յերևան հանելով ապարատներում, թե՛ հին կարգերից մնացած սովորույթները ու բյուրոկրատիկ խեղաթյուրումները, ուժեղացնելու յեն խորհուրդների աշխատանքները: Այս բոլորին զուգընթաց առաջնակարգ տեղ է գրավում, ինչպես ցույց ավեց ընթացիկ տարին, բանվորական մատակարարման գործի կանոնավոր կազմակերպումը: Քաղխորհուրդն իր ուշադրությունն ավելի ևս պիտի սրի բան. մատակարարման խնդիրների վրա և իր առևտրակոոպերատիվ սեկցիայի միջոցով մանրամասն ուսումնասիրության յենթարկի կոոպերացիայի աշխատանքները և այդպիսին դնի իր բարձրության վրա, վորով ավելի կթեթևանան մեր աճման անցողիկ դժվարությունները:

Քաղխորհուրդն իր հսկողության ու ուշադրության կենտրոնը չպետք է հեռացնի նաև արդյունաբերության խնդիրներից, այն է՝ ապրանքների վորակի լավացումը, աշխատանքի արտադրողականության բարձրացում, ինքնարժեքի իջեցում և այլն: Նշված հարցերը պետք է լայնորեն քննության առնվեն ու համապատասխան լուծում ստանան, ինչպես սեկցիաների, նույնպես նախագահության ու պլենումի նիստերում: Սրա հետևանքով Քաղխորհրդում ընտրված յուրաքանչյուր պատգամավոր պետք է օժանդակի, վորպեսզի 5-ամյակի 3-րդ տարվա պլանի, ինչպես քանակական այնպես և վորակական ցուցանիշները լրիվ կատարվեն:



5-ամյակը 4 տարում կատարելու գործում նվազ տեղ չի բռնում կուլտուրական հեղափոխության խնդիրները: Բանվոր դասակարգը չի պատկերացնում սոցիալիստական շինարարությունն առանց լայն աշխատավոր մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացման: Ընտրված պատգամավորները պետք է ընդհուպ մոտենան ընդհանուր պարտադիր ուսման, կադրերի վերապատրաստման և անգրագիտությունը լրիվին վերացման գործին և իրենց ամբողջ ուժն ու ընդունակությունները ի սպաս դնեն այդ ուղղությամբ Քաղխորհրդի կողմից կատարվող ձեռնարկումներին:

Յերկրի ինքնապաշտպանության գործը լայն մասսաների սեփականություն դարձնելու և Քաղաքային խորհրդի կապը Կարմիր Բանակի հետ է՛լ ավելի ամրապնդելու համար խոշոր դեր ունի կատարելու զինվորական սեկցիան: Նորընտիր պատգամավորները պետք է առանձին հետաքրքրություն հայտնաբերեն դեպի ռազմական գործը, ակտիվ մասնակցեն զինվորական սեկցիայի նիստերին, իր ժամանակին քննության առնեն բանակայիններին հուզող հարցերը և տան համապատասխան լուծում, վորով է՛լ ավելի կբարձրացնենք սոցիալիստական հայրենիքի արթուն պահակ Կարմիր Բանակի բարոյա-քաղաքական վիճակը:

Սոցիալիստական հայրենիքի աճման դժվարությունները մի կողմից և պրոլետարիատի դիկտատուրայի՝ կապի-

տալիստական ելեմենտների վրա բոլոր ճակատներում ուժեղ հարձակում գործելու փաստի հետևանքով, դասակարգային թշնամու օրհասական դիմադրությունը մյուս կողմից, ուժեղացրել են մանր բուրժուազիայի տատանումները, վորոնք անդրադարձել են նաև պրոլետարիատի անկայուն տարրերի վրա: Այդ տատանումները վորոշ չափով փոխանցվել են նաև կուսակցության վորոշ օղակների վրա: Աջ օպպորտյունիզմը, վոր հանդիսանում է կուլակի իղձերի իրական արտահայտիչը, ներկա էտապում, հանդիսանում է կուսակցության մեջ ամենավտանգավոր թեքումը, սակայն վոչ մի րոպե չպետք է մոռանալ «ձախ»՝ տրոցկիստական օպպորտունիզմի թեքման վտանգը, վոր իր էությամբ մանր բուրժուական ազդեցությունների գաղափարախոսություն է, իսկ աջ-«ձախ» յերկերեսանի Սիրցովի և Լոմինաձեյի կազմած օպպորտունիստական բլոկի գոյությունը և հակակուսակցական աշխատանքները, միանգամ ևս անյերկբայելիորեն հաստատում են կուսակցության կողմից աջ և «ձախ» օպպորտունիզմի տված լենինյան գնահատականի ճշտությունը:

Քաղխորհուրդ ընտրված յուրաքանչյուր պատգամավորը պետք է գոտեպնդվի լենինյան պայքարի զենքով, ուշադրությամբ հետևի և հայտնաբերի Քաղխորհրդի աշխատանքներում ցուցաբերող օպպորտյունիստական տարրերին, մերկացնի դեպի նրանց հաշտվողական վերաբերմունք ունեցողների և անողոք պայքար տանելով նրանց դեմ, ապահովի կուսակցության գլխավոր գծի անշեղ կենսագործումը ազգային քաղաքականության, պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիզմի շինարարության բոլոր ասպարեզներում.

Վերոհիշյալ սկզբունքների իրագործման կապակցությամբ, ընտրողներն առաջադրում են հետևյալ միջոցների կիրառումը.



## ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ՊԼԵՆՈՒՄԻ, ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Քաղխորհրդի պլենումի, նախագահության ուշադրությունը բեվեռել քաղաքի սոցիալիստական արդյունաբերության զարգացման, սոցիալ-կուլտուրական կյանքի, կոմմունալ շինարարության, ֆինանսա-բյուջետային, հեղափոխական օրինականության և այլ կենսական խնդիրների կիրառման վրա.

2. Միջոցներ ձեռք առնել, վոր Քաղաքային խորհրդի պլենումի, նախագահության նիստերը հրավիրվեն օրացուցային կարգով, նիստերում քննության առնվելիք հիմնական հարցերը նախորոք մշակման յենթարկվեն Քաղխորհրդի սեկցիաներում և պլան-վիճակագրական հանձնաժողովում.

3. Ուժեղացնել Քաղաքային խորհրդի հսկողությունը քաղաքի սահմաններում գտնվող հիմնարկ-ձեռնարկների աշխատանքների վրա և պարբերաբար Քաղխորհրդի նիստերում լսել նրանց զեկուցումները տարվող աշխատանքների, արդֆինպլանների կազմելու և կատարելու վերաբերյալ.

4. Միջոցներ ձեռք առնել հաշվառման վերցնելու Քաղաքային խորհրդի վորոշումները և հսկել, վոր այդպիսիները ժամանակին և առանց ձգձգումների կիրարկվեն կյանքում.

5. Ուժեղացնել Քաղխորհրդի նախագահության ղեկավարությունը Քաղխորհրդի բաժինների աշխատանքների բնագավառում, վերջինների գործունեությունը դնելով խիստ ծրագրային հունի մեջ.

6. Քաղաքային խորհրդի սեկցիաների աշխատանքների ասպարեզում գոյություն ունեցող թերությունները վերացնելու նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցները.

ա) Ծավալել սոցիալիստական մրցումը Քաղաքային խորհրդի սեկցիաներում.

բ) Սեկցիաների մեջ ներգրավել ակտիվ բանվորներ, արհեստակցական և հասարակական այլ կազմակերպությունների անդամներ.

գ) Սեկցիաների աշխատանքների կենտրոնը դարձնել քաղաքի արտադրության սոցիալիստական վերակառուցման խնդիրները.

դ) Սեկցիաների կողմից տարվող աշխատանքները դնել ծրագրային հունի մեջ.

յե) Ուժեղացնել սեկցիաների կապը քաղաքի արտադրական ձեռնարկների հետ, պարբերաբար վերջինների նիստերը հրավիրելով գործարաններում.

զ) Հիմնարկ-ձեռնարկների աշխատանքները ստուգման յենթարկելու նպատակով Քաղխորհրդի սեկցիաների անդամներից կազմակերպել բրիգադներ և հետեվողական հսկողություն ունենալ, վոր նրանց աշխատանքները դրվեն իրենց կոչման բարձրության վրա.

ե) Ուժեղացնել սեկցիաների փոխադարձ կապը հրավիրելով սեկցիաների և նրանց բյուրոների միացյալ նիստեր.

ը) Հաշվետվման յենթարկել Քաղխորհրդի սեկցիաների վորոշումները և հսկողություն ունենալ, վոր այդպիսիները ժամանակին կիրառվեն կյանքում.

թ) Քաղխորհրդի սեկցիաների նիստերը հրավիրել որացուցային կարգով և միջոցներ ձեռք առնել, վոր սեկցիաների նիստերի համար տրամադրվեն համապատասխան շենքեր, իսկ այլ վայրերում նիստեր հրավիրելիս - նաև փոխադրական միջոցներ.

ժ) Քաղխորհրդի նախագահության ղեկավարությունը սեկցիաների աշխատանքների ասպարեզում ուժեղացնելու նպատակով, Քաղխորհրդի նախագահության նիստերում



պարբերաբար լսել սեկցիաների զեկուցումները իրենց գործունեության մասին.

ժա) Քաղխորհրդի սեկցիաների և Քաղխորհրդի անդամների անելիքների մասին հրատարակել հանրամատչելի գրականություն.

ժբ) Քաղաքային խորհրդի անդամներին խորհրդային շինարարության խնդիրներին իրազեկ դարձնելու նպատակով կազմակերպել կարճատև հնգօրյա դասընթացներ, վորի համար տրամադրել համապատասխան ֆինանսական միջոցներ:

## ԿՈՄՄՈՒՆԱԼ-ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

7. Քաղաքի բարեկարգման աշխատանքները իր կոչման բարձրության վրա դնելու նպատակով կիրառել հետեվյալ միջոցները.

ա) Կարգի բերել քաղաքի և կոոպերատիվ թաղի փողոցները, ինչպես նաև ֆինանսական հնարավորությունների սահմաններում մայթման յենթարկել փողոցները.

բ) Ուժանդակել Հողժողկոմատին Քանաքեռի բլուրը անտառապատելու.

գ) Առանձնակի ուշադրություն դարձնել քաղաքի ծաղկանոցների և ծառատունկների զարգացման վրա.

դ) Կառուցել ընկ. Շահումյանի հուշարձանը.

8. Բյուջետային միջոցների սահմաններում կառուցել նախատեսնված բնակարաններ, ապահովելով այդպիսիներին անհրաժեշտ շինանյութերով և վորակյալ բանվորական ուժով: Ավարտել քաղաքի անավարտ կառուցումները (բնակարանային շենքեր, հրշեջ դումակ, հյուրանոց) և կենտրոնական հյուրանոցում ապրողներին փոխադրել նժանաքին ները, ստեղծելով հնարավորություն գոյություն ունեցող հյուրանոցը ոգտագործելու բուն նպատակին:

9. Քաղաքային տները հանձնել Տնտրեստին, առաջարկելով վերջինին հոգատարություն ունենալ տների բարեկարգ վիճակում պահելու գործի վրա:

10. Ավարտել նոր ջրմուղու կառուցումը 1931 թ., իսկ նույն թվի ամառվա սկզբին ջրմուղը միացնել առաջին հերթին նախատեսնված քաղաքի ջրախողովակների հետ:

11. Ձեռնարկել քաղաքի կոյուղու կառուցման աշխատանքներին.

12. Ձեռնարկել նոր բաղնիքի, լվացքատան, կենդանիների դիակայրման վառարանի կառուցման աշխատանքներին.

13. Ձեռնարկել էլեկտրոքարշի գծի և պարկի կառուցմանը այն հաշվով, որ նշված աշխատանքներն ավարտվեն 1932 թվին:

14. Քաղաքի շինարարությանն սպասարկելու նպատակով ավելացնել աղյուս պատրաստի մեքենաների թիվը, ինչպես նաև գումակի սայլերի և տակառների քանակը, վերջինս աստիճանաբար յենթարկելով մեքենայացման:

15. Լայն բանվորական մասսաներին սպասարկելու համար գտնել անհրաժեշտ քաղաքում ունենալ դրամատուն.

16. Ընդլայնել քաղաքի էլեկտրոցանցը և միջոցներ ձեռք առնել, որ քաղաքի ծայրամասերը ստանան էլեկտրական լուսավորություն:

17. Հասարակական կարիքների համար քաղաքի ծայրամասերում ունենալ հեռախոսային կետեր:

18. Ֆիզկուլտուրայի հետ կապված աշխատանքներն իր կոչման բարձրության վրա դնելու նպատակով կառուցել ֆիզկուլտուրայի դահլիճ, ինչպես նաև ֆիզկուլտուրայի հրապարակի համար տրամադրել համապատասխան հողամաս:

19. Քաղաքի ծայրամասերի ազգաբնակչության սպասարկման կարիքները բավարարելու նպատակով կառուցել



խանութներ և այդպիսիները տրամադրել բանկոպին՝ բաշխիչ կետեր կազմակերպելու համար:

20. Շտապ կերպով ավարտել քաղաքի նախագծի վերանայումը և հաստատումը: Արգելել քաղաքի սահմաններում ապօրինի շինարարություն կատարելը, հսկողություն ունենալով, որ անշեղ կերպով շինարարությունը ընթանա նոր նախագծով և կառուցման իրավունքներով սահմանված կարգով: Միջոցներ ձեռք առնել, որ բոլոր տնատիրությունները ունենան հատակագծեր, ինչպես նաև ստանալ համապատասխան աշխատանք կարգավորելու պետական ֆոնդը: Պետական և հասարակական հիմնարկ-ձեռնարկներին տրամադրած շենքերի դիմաց սահմանված նորմաներով գանձել ամորտիզացիոն գումարներ և ստեղծել ամորտիզացիոն ֆոնդ: Առևտրա-արդյունաբերական շենքերի յեկամուտների ապահովելու համար, այդպիսիները աստիճանաբար ազատել բնակիչներից և ծառայեցնել իրենց անմիջական նպատակին:

21. Կարգավորել Կոմմունալ բաժնի և ձեռնարկների հաշվապահությունը և շտապ կարգով անցկացնել գույքերի հաշվառում, այդ նպատակի համար բյուջեյում նախատեսնելով համապատասխան գումարներ:

22. Քաղաքի յեկամուտների գանձման աշխատանքները դնել կանոնավոր հիմքերի վրա և միջոցներ ձեռք առնել, որ մնացած ապառքները լուծարքի յենթարկվեն:

23. Ձեռնարկել Կոմմունալ թանգարանի կազմակերպման աշխատանքներին, այդ նպատակի համար տրամադրելով համապատասխան շենք: Առաջադրել Հայկինոյին նկարել հին քաղաքի կառուցումների և ազգաբնակության հին կենցաղի նըմուշներ:

## ՏԵՂԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

24. Տեղական արդյունաբերությունը մեխանիզացիայի յենթարկելու, գոյություն ունեցող գործարանների թիվը ա-

վերացնելու, կահավորելու, ինչպես նաև արտադրության որակը բարձրացնելու և ինքնարժեքն իջեցնելու նպատակով, գտնել անհրաժեշտ.

ա) Ուժեղացնել բյուջետային հատկացումները 1931 թվի կապիտալ շինարարության ասպարեզում.

բ) Միջնորդել Ժողկոմխորհի առաջ կրի և գաջի նորակառույց գործարանները հանձնելու Քաղխորհրդի տեղ. արդյունաբերական բաժնին.

գ) Ձեռնարկել յերկրաբանական հետախուզական աշխատանքներ յերևան հանելու շինանյութերի հանքավայրը.

դ) Ազգաբնակչության մատակարարման գործը իր կոչման բարձրության վրա դնելու նպատակով գտնել անհրաժեշտ տեղ. արդյունաբերական գծով կառուցել սննդամթերքներ արտադրող գործարաններ.

յե) Գտնել անհրաժեշտ շինանյութերի արտադրությունը տեղական հումքից կենտրոնացնել Յերևանի Քաղխորհրդի Տեղ. Արդյունաբերական բաժնում:

## ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

25. Քաղաքի կուլտուր-լուսավորության աշխատանքներն իր կոչման բարձրության վրա դնելու նպատակով գտնել անհրաժեշտ.

ա) Դպրոցական շինարարության կարիքների համար բյուջեյով նախատեսնված գումարները լրիվ չափով օգտագործել և կառուցել. մեկ շենք 7-ամյակների համար, մեկ շենք 1-ին աստիճանի դպրոցի համար, մեկ շենք օրինակելի մանկապարտեզի համար, մեկ շենք մեթոդական կայանի համար, ինչպես նաև կառուցել «Շահումյան» անվան դպրոցի յերրորդ հարկը.

բ) Ապահովել պոլիտեխնիկական կրթությունն իր յերեք մեքենայացման յենթարկված արհեստանոցներով (մեկ հյուսնոց, մեքենայական և կազմատուն).



գ) Պարտադիր ուսման կիրառումն ապահովելու նպատակով ստեղծել չքավոր աշակերտների ֆոնդ.

յե) Կադրերի պատրաստման և վերապատրաստման համար բյուջեյում նախատեսնել համապատասխան գումարներ.

զ) Բարելավել դպրոցական աշխատակիցների տնտեսական դրությունը.

է) Քաղաքի դպրոցներում և հանրակացարաններում անցկացնել ռադիոցանց, ինչպես նաև ձեռք բերել մանկական կինոներ.

ը) Ընդլայնել գոյություն ունեցող մանկատունը, մեքենայացման յենթարկել նրա արհեստանոցը՝ փողոցից հավաքած անապաստան յերեխաների դաստիարակությունը ապահովելու համար.

թ) Ընդլայնել պիոներական ճամբարի ֆոնդը, ստեղծելով հնարավորություն մեծ թվով չքավոր յերեխաներ ուղարկելու ճամբար.

ժ) Սպորտ աշխատանքները կանոնավորելու համար ավարտել ֆիզկուլտ դահլիճի կառուցումը, ինչպես նաև ձեռք բերել այդ դահլիճի համար անհրաժեշտ ֆիզկուլտ գործիքներ.

ժա) Քաղաքի աշակերտության համար կառուցել կենտրոնական օրինակելի հրապարակ.

ժբ) Առանձնակի ուշադրություն դարձնել քաղաքի դպրոցական շենքերի պահպանության և վերանորոգության գործի վրա.

ժգ» Ուժեղացնել բժշկական հսկողությունը դպրոցականների առողջապահական դրության վրա և միջոցներ տրամադրել, որ թույլ և հիվանդ աշակերտները ուղարկվեն բուժարաններ, հանգստի տներ:

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Քաղաքի առողջապահության գործը կանոնավորելու և իր կոչման բարձրության վրա դնելու նպատակով գտնել անհրաժեշտ հետևյալ միջոցների կիրառումը.

## ԲՈՒԺ-ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ ԳԾՈՎ

26. ա) Ավելացնել մահճակալների թիվը հիվանդանոցներում առնվազն 25%-ով.

բ) կազմակերպել վորպես ինքնուրույն միավոր շտապ օգնության կայան.

գ) Անցնել 120 մահճակալանոց սուր-վարակիչ հիվանդանոցի կառուցման աշխատանքներին.

դ) Անցնել քաղաքի կենտրոնական միասնական բուժարանի շենքի կառուցման, վորի նախագիծը արդեն հաստատված է: Դիսպանսերիզացիայի յենթարկել բոլոր արտադրական բանվորներին ըստ արտադրութ. և ըստ բնակավայրերի, վորի համար հրավիրել հատուկ մասնագետներ և բարձր վորակով բժիշկներ.

յե) Տներում բուժ. օգնության գործը կանոնավորելու նպատակով, ավելացնել բժիշկների թիվը այն հաշվով, վորպեսզի մեկ բժշկի վրա ընկնի վոչ ավել քան հինգ հազար բնակչություն: Բոլոր բժիշկները պետք է ունենան անպայման հիվանդանոցային փորձաշրջան և նրանց աշխատավարձը պետք է գերազանցի մնացած բժիշկների աշխատավարձին.

զ) Արաբկիրում և Նորքում կազմակերպել բուժակայաններ.

է) Նկատի ունենալով, վոր քաղաքի ծայրամասերում դեղատներ չունենալու պատճառով հիվանդները ստիպված են դեղորայքի համար գալ քաղաք, կենտրոնում կազմակերպել առանձին դեղատուն:

## ԿՈՄՈՒՆԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԳԾՈՎ

27. ա) Քաղաքի աղբահանման գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու նպատակով, գտնել անհրաժեշտ ավելացնել աղբատար մեքենաների և ֆուրգոնների քանակը՝ հասցնելով



նրանց թիվը 5 մեքենայի, 15 ֆուրգոնի և 2 հատ մի ձիանի սայլակի (նեղ փողոցների համար).

բ) Առանձնակի ուշադրություն դարձնել, վոր գոյություն ունեցող փոխադրական միջոցները օգտագործվեն ռացիոնալ կերպով.

գ) Կանոնավորել քաղաքի ծայրամասերի աղբահանման գործը: Քաղաքում կուտակվող աղբը անվնաս դարձնելու նպատակով գտնել անհրաժեշտ անմիջապես ձեռնարկելու աղբայրման վառարանի կառուցմանը: Քաղաքի աղբահանությունը կատարել գիշերը:

դ) Լայնացնել դռնապանների ցանցը այն հաշվով, վոր բոլոր փողոցներում լինեն դռնապաններ: Ուժեղացնել հսկողությունը դռնապանների աշխատանքների վրա.

յե) Նկատի ունենալով ասենիզացիոն արդյի ներկայիս միանգամայն անբավարար քանակը, գտնել անհրաժեշտ ասենիզացիոն տակառների քանակը ավելացնել և նրանց թիվը հասցնել մինչև 15-ի.

զ) Նկատի ունենալով, վոր նոր կոյուղու կառուցումը դեռ չի սկսված, գտնել անհրաժեշտ կանոնավորել և վերանորոգել հին կոյուղին: Գոյություն ունեցող կոյուղու համար կառուցել բիոլոգիական ֆիլտր: Կարմիր բանակի փողոցի վերջում բաց հոսող կոյուղին ծածկել և կարգավորել.

է) Կանոնավորել քաղաքի այգիների և բանջարանոցների առուները.

ը) Միջոցներ ձեռք առնել քաղաքի մեջ և շուրջը գտնվող արհեստական ճահճացումները և լճացումները չորացնելու (Մարքսի փողոց, Շիլաչի մահլա, Մեքենայական փոխ և կայարանի մեջ ընկնող տարածությունը, նոր Բյութանիայի հյուսիս-արևմտյան կողմում գտնվող տարածությունը, Սարվանլարի ճահճանոցներն և այլն.

թ) Միջոցներ ձեռք առնել և պարտադրել բոլոր շինարարական ձեռնարկներին նոր կառուցվող շենքերի նախա-

գծերը համաձայնեցնելու գոյություն ունեցող օրենքների հիման վրա սանիտարական բաժանմունքի հետ.

ժ) Աշխատավորական լայն մասսաները սանիտարական աշխատանքներին մասնակից դարձնելու և տների ու բնակարանների սանիտարական դրությունը բարելավելու նպատակով անհրաժեշտ համարել Բնակշինկոոպ և Բնակվարձկոոպ տներին կից կազմակերպել առողջապահական բջիջներ.

ժա) Քաղաքում գոյություն ունեցող փոշու դեմ պայքարելու նպատակով անհրաժեշտ համարել ձեռք բերել էլեկտրական ջրմղիչներ՝ գլխավոր փողոցները ջրելու համար:

## ԴԵԶԻՆՖԵԿՑԻԱՅԻ ՅԵՎ ԴԵԶԻՆՍԵԿՑԻԱՅԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

28. ա) Գտնել անհրաժեշտ կառուցել նոր շենք դեզինֆեկցիայի կամերայի համար իր բոլոր հարմարություններով.

բ) Ի նկատի ունենալով, որ ներկայիս դեզ. կամերան չի աշխատում, ինչպես հարկավոր է (բակտերիոլոգիա տեսակետից) անհրաժեշտ է ձեռք բերել նոր կամերա պարո-ֆորմալինային մեծ ծավալի.

գ) Դեզ. կամերային կից անհրաժեշտ է ունենալ լվացման տուն լվացքատան հետ միասին.

դ) Ներկայիս դեզ. կամերայի շենքը ազատել բնակիչներից:

## ԴՊՐՈՑԱ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԳԾՈՎ

29. ա) Դպրոցների շենքերում տարվող յերեք-չորս հերթի պարապմունքները պահանջում են անպայմանորեն մասամբ թեթևացնել.



բ) Դպրոցներում ունենալ սեղանատուն, ակումբ, տաք նախաճաշ.

գ) Բարձրացնել դպրոցների շենքերի սանիտարական դրությունը.

դ) Դպրոցների նստարանները յենթարկել անհրաժեշտ վերանորոգման, վորպեսզի համապատասխանի առողջապահական պահանջներին.

յե) Սան. բժիշկների հայեցողությամբ դպրոցներում անցկացնել սանիտարական օրեր:

## ՍՆՆԴԱ-ՄԹԵՐԱՅԻՆ ԳԾՈՎ

30. ա) Բարձրացնել քաղաքի շուկաների սանիտարական դրությունը, այն է. անցկացնել խմելու ջուր, լույս, շուկաները ջրել, սալահատակել, և նոր շուկայում կառուցել նոր արտաքնոց, այդպիսին միացնելով կոյուղու հետ.

բ) Շուկաների աղբահանությունը և ջրելը կատարել օրական 3 անգամ, հատկապես ամառային ամիսների ընթացքում.

գ) Հին և նոր շուկաներում առավոտյան ժամը 5-ից մինչև յերեկոյան ժամը 7-ը ունենալ միլիցիոներ պահակ սանիտարական հսկողության համար.

դ) Անհրաժեշտ համարել քաղաքում ունենալ սանիտարական լաբորատորիա, ինչպես նաև դիետետիկ ճաշարան:

## ՍԱՆ-ԼՈՒՍ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

31. ա) Կազմակերպել քաղաքում սան. լուս. տուն և աշխատանքները կենտրոնացնել այնտեղ.

բ) Խոշոր գործարաններին կից կազմակերպել սանիտարական-առողջապահական անկյուններ.

գ) Բնակկոոպմիության կից կազմակերպել սան. յեռյակներ.

Гос. Публичная библиотека ՀՍՍՀ — ССРА им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
15523-52

դ) Անհրաժեշտ համարել ՀԱՄԽ-ի միջոցով շրջիկ թատրոնի ռեպերտուարի մեջ մտցնել առողջապահական և սոցիալական բնույթ կրող ագիտ պիեսներ․

յե) Սան․ լուս․ աշխատանքները մասսայականացնելու համար, հրատարակել բրոշյուրներ, պլակատներ, աղյուսակներ հայերեն և թուրքերեն լեզուներով։

## ՖԻԶԿՈՒԼՏԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

32․ ա) Քաղխորհրդին կից կազմակերպել ֆիզկուլտ բժշկական բյուրո․

բ) Ունենալ քաղաքում լավ կազմակերպված կաբինետներ ֆիզկուլտուրնիկների անտրոպոմետրիկ քննությունների համար, նամանավանդ աշակերտական բանվորների համար․

գ) Ունենալ առանձին ֆոնդ ֆիզկուլտի բժիշկներին Մոսկվա—Լենինգրադ ֆիզկուլտի ինստիտուտ գործուղելու համար․

դ) Միջնորդել Առժողկոմատի առաջ ֆիզկուլտ․ բժիշկների կադրերի պատրաստման խնդրով․

յե) Նորակառույց բնակարաններում նախատեսնել ֆիզկուլտ․ դահլիճներ լիցքային աշխատանքներ տանելու, ինչպես նաև ֆիզկուլտուրայի կարիքների համար շենքերին կից տրամադրել համապատասխան հողամասեր․

զ) Ավարտել վելոդրոմի կառուցման աշխատանքները, ինչպես նաև ստադիոնի պակաս աշխատանքները․

ե) Անդրկովկասյան ֆիզկուլտի ինստիտուտներում և Յերևանի ռիթմո-պլաստիկայի ֆիզկուլտուր տեխնիկումում ունենալ թոշակառու ուսանողներ․

ը) Քաղխորհրդի 1931 թվի բյուջեյում ֆիզկուլտ կարիքների համար նախատեսել համապատասխան գումարներ՝ ստադիոն—շինարարության, ինվենտարի ձեռք բերման, կադրերի պատրաստման և մի շարք վերակառուցման աշխատանքների ծախքերը ծածկելու համար․



թ) Ուժեղացնել հսկողությունը, որպեսզի քաղաքի հիմնարկ-ձեռնարկները կիրառեն կյանքում ֆիզկուլտուրայի զարգացման վերաբերյալ հրատարակած որոշումները։

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

33․ ա) Սոցիալական ապահովության աշխատանքներն իր կոչման բարձրության վրա դնելու նպատակով կիրառել հետևյալ միջոցները․

ա) Ուժեղացնել Քաղխորհրդի նախագահության ղեկավարությունը սոցիալական ապահովության աշխատանքների ասպարեզում․

բ) Միջոցներ ձեռք առնել, որ Սոցապբաժնին առընթեր գործող զինվորական, աշխատանքի, հաշմանդամների, քաղաքացիական կռիվներում տուժածներին, անհայտ կորածների ընտանիքներին, կարմիր բանակայինների ընտանիքներին և չքավոր քաղաքացիներին թոշակ ու նպաստ որոշող հանձնաժողովի գործունեությունը դրվի կանոնավոր հունի մեջ․

գ) Գտնել անհրաժեշտ սոց․ ապահովության կարիքների համար 1929—30 թ․ բյուջեյում նախատեսված գումարները ավելացնել․

դ) Ընդլայնել Սոցապբաժնին առընթեր գոյություն ունեցող հաշմանդամների հանրակացարանն, ընդգրկելով նրա մեջ ավելի մեծ թվով կին անապաստան հաշմանդամներ։ Միաժամանակ առանձին հոգատարության առարկա դարձնել հաշմանդամների պարենավորման և հագուստեղենի խնդիրը։

## ՎԱՐՉԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

34․ ա) Ուժեղացնել պայքարը քաղաքում գոյություն ունեցող սրիկայական յերևույթների դեմ․

բ) Միջոցներ ձեռք առնել հավաքելու փողոցների անապաստան յերեխաներին և անապաստան կանանց համապատասխան ուղղիչ-դաստիարակչական հաստատություններում նրանց տեղավորելու նպատակով.

գ) Ուժեղացնել հսկողությունը քաղաքային Խորհրդի պրատադիր որոշումների կիրառման գործում պատասխանատվության յենթարկելով այն բոլոր քաղաքացիներին, վորոնք խախտում են Քաղխորհրդի վորոշումները՝ հասարակական անդորրության ու կարգի պահպանության, հեղափոխական օրինականության կիրառման և այլ ասպարեզներում:

դ) Միջոցներ ձեռք առնել բարելավելու քաղաքի միլիցիայի կենցաղային և տնտեսական դրությունը.

յե) Նկատի առնելով, վոր Միլիցիայի շարքերում գոյություն ունեցող հոսունության գլխավոր պատճառներից կարևոր տեղը բռնում է բնակարանային խնդիրը, միջոցներ ձեռք առնել Միլիցիայի համար կառուցել հանրակացարան, ինչպես նաև Քաղխորհրդի կողմից նոր կառուցվող շենքերում տրամադրել համապատասխան քանակությամբ սենյակներ.

զ) Միլիցիայի շարքային և հրամանատարական կազմի քաղաքական մակարդակը բարձրացնելու նպատակով կազմակերպել կարճատև դասընթացներ, ինչպես նաև Միլիցիայի աշխատակիցներին գործուղել համապատասխան միլիցիական դպրոցներ, այդ նպատակների համար բյուջեյում նախատեսնելով համապատասխան գումարներ:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

35. ա) Բյուջեն իր ժամանակին և իրական հողի վրա կառուցելու նպատակով առանձին ուշադրությամբ հաշվի առնել Քաղխորհրդի բոլոր յեկամտային աղբյուրները և նախապես վերամշակված նախագծերով լրիվին ապահովել Քաղխորհրդի յենթակա հիմնարկ-ձեռնարկների պահանջները: Բանվորական մասսաներին մասնակից դարձնել թե ամբողջ բյուջեյի կառուցման և թե առանձին ճյուղերի նախագծերի մշակման աշխատանքներին.



գ) Առանձին ուշադրություն դարձնել բյուջետային դիսցիպլինայի խիստ կիրառմանը և հետևել յեկամտային մասի լրիվ կատարման վրա.

դ) Յուրաքանչյուր յեռամսյակում բյուջեյի կատարման մասին տալ մանրամասն զեկուցում բանվորական ժողովներում:

## ՊԵՏ-ՎԱՐԿԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

36. ա) Ձեռնարկել բոլոր միջոցները պարզաբանելու լայն մասսաներին Պետ-փոխառությունների դերը և նշանակությունը յերկրի տնտեսության սոցիալիստական վերակառուցման և «Հնգամյակը չորս տարում» իրագործելու խնդրում.

բ) Գործադրել բոլոր միջոցները, վոր Պետ-փոխառությունների իրացման նախագիծը կիրարկվի կյանքում 100 տոկոսով.

գ) Ֆինանսական միջոցների մոբիլիզացիան հաջողությամբ ավարտելու նպատակով ձեռնարկել ամենակտրուկ միջոցները ապառնակչության վճարումները ժամանակին և լրիվ գանձելու համար:

## ՀԱՐԿՄԱՆ ՅԵՎ ԳԱՆՁՄԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

37. ա) Ապահովել դասակարգային գծի անշեղ կիրարկումը հարկման աշխատանքների ասպարեզում.

բ) Ձեռք առնել բոլոր հնարավոր միջոցները հայտաբերելու գաղտնի առևտրով զբաղվող քաղաքացիներին և նրանց յեկամուտների շրջանառության չափը.

գ) Հարկերի գանձման աշխատանքները կազմակերպել

այնպես, որ հնարավոր լինի կարճ ժամանակում լուծարքի յենթարկել նախկին ապառքները և ապահովել ընթացիկ վճարումները օրենքով սահմանված ժամկետներին:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

38. ա) Միջոցներ ձեռք առնել, որ ժողդատարաններում գործերը քննվեն արագ կերպով և առանց ձգձգումների.

բ) Ուժեղացնել օրենքների մասսայականացումը բանվորական և աշխատավորական մասսաներում.

գ) Իր կողմից բարձրության վրա դնել աշխատավոր մասսաների իրավական ոգնության գործը.

## ԱՌԵՎՏՐԻ ՅԵՎ ԿՈՈՊԵՐԻՑԻԱՅԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

37. ա) Ուժեղացնել Քաղաքային Խորհրդի նախագահության հսկողությունը բանվորական կոոպերացիայի աշխատանքների վրա և առևտրի ու կոոպերացիայի ցանցի ընդլայնման և բարելավման նպատակով կիրառել հետևյալ միջոցները.

ա) Առանձին խանութների վրա հաստատել բանվորական կոլեկտիվների շեֆություն.

բ) Հատուկ ուշադրություն դարձնել կադրերի պատրաստման և վերապատրաստման գործի վրա.

գ) Ուժեղացնել հաշվածայնությունը և ստուգումը բանվորական կոոպերացիայի ցանցում.

դ) Բանկոոպերացիայի արտադրական ծրագրերը քննության առնել բանվորական լայն ժողովներում.

յե) Արագացնել Բանկոոպի արտադրական ապարատի բանվորականացման խնդրի լուծումը.

զ) Միջոցներ ձեռք առնել կարգավորելու բանվորական մատակարարման գործը.

է) Հետեվողական հսկողություն ունենալ ճաշարանների



և թեյարանների սանիտարական դրության վրա, ինչպես նաև միջոցներ ձեռք առնել, որ հացի վորակը բարձրացվի և ժամանակին բաշխվի քաղաքացիներին.

ը) Ապահովել փակ բաշխիչները ամեն տեսակի անհրաժեշտ մթերքներով, վերջ տալով ճաշարաններում առաջացող հերթերին.

թ) Միջոցներ ձեռք առնել աշխուժացնելու խանութային հանձնաժողովների աշխատանքները.

ժ) Կարգավորել դեֆեցիտային ապրանքների բաշխումը և ուժեղացնել պայքարը այդ ասպարեզում գոյություն ունեցող չարաշահությունների դեմ.

ժա) Արագացնել փայակուտակման տեմպը, ինչպես նաև ընդգրկել Բանկոոպի ցանցի մեջ նոր անդամներ.

ժբ) Կարգավորել ճաշարանների և խանութներին կից պահեստները, միաժամանակ տրամադրելով Բանկոոպին համապատասխան շենքեր բաշխման կետեր կազմակերպելու համար: Նոր կառուցվող շենքերի նախագծերը կազմելիս նախատեսնել Բանկոոպի ոգտագործության համար համապատասխան խանութներ և պահեստներ.

ժգ) Աշխուժացնել Քաղխորհրդի Առևտ. սեկցիայի աշխատանքները և նրա հսկողությունը բանվորական կոոպերացիայի ցանցի ասպարեզում դարձնել հետևողական: Ժողովրդական սննդի ապահովման ու գործի հաջող կազմակերպման տեսակետից գտնել անհրաժեշտ կոոպերատիվ սեկտորի առընթեր կազմակերպել ժողովրդական սննդի յենտեկցիա.

ժդ) Միջոցներ ձեռք առնել զարգացնելու և իր կողմից ուշադրության վրա դնելու Բանկոոպի մերձքաղաքային խորհրդային տնտեսությունը.

ժե) Գտնել անհրաժեշտ տնային լիազորների գեկավարության պարտականությունները դնել Բանկոոպի Կազմժնի վրա.

12--

ժզ) Կենսական պահանջ համարել Բանկոոպի Վարչության սեփական շենք ունենալու խնդիրը, վորի համար տրամադրել համապատասխան հողամաս․

ժը) Կարգավորել և ուժեղացնել Բանկոոպի փոխադրական միջոցների խնդիրը․

ժթ) Ծավալել Բանկոոպի կուլտուր-կրթական աշխատանքները Բանկոոպի անդամների մեջ։

ՀՐԱՀԱՆԳ—ՆԱԿԱԶ ՄՇԱԿՈՂ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1931 թ․

Հունվարին

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ССР А
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



ՀՀ Ազգային գրադարան
NL0218553

40.164

352(47.925)
2-99